



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 3 «2» 12 2015թ.

Համալսարանի գիտական խորհուրդը, լսելով և քննարկելով ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Ս. Ա. Ավետիսյանի «Բարձրագույն բժշկական կրթություն. անցում երկաստիճան համակարգից անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրի: Օազող խնդիրները և դրանց հաղթահարման ուղիները» թեմայով զեկուցումը,

որոշում է՝

1. 2014-15 ուստարվա հաշվետու ժամանակաշրջանում ուսումնամեթոդական վարչության աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար:
2. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆ. Ս.Ա. Ավետիսյանին, ուսումնամեթոդական վարչության ծրագրերի բաժնի պետ, դոց. Ա.Վ. Բայկովին և համալսարանի բոլոր ուսումնամեթոդական խորհուրդների նախագահներին.
- 2.1 մինչև 2015 թ. դեկտեմբերի 21-ը մշակել և գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել «Առարկայական ծրագրերի քննարկման և հաստատման ընթացակարգը», անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրի շրջանակներում,
- 2.2 մինչև 2016 թ. ապրիլի 1-ը «Առարկայական ծրագրերի քննարկման և հաստատման ընթացակարգի» համաձայն մշակել և ռեկտորի հաստատմանը ներկայացնել բոլոր առարկաների ուսումնական ծրագրերը:
3. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆ. Ս.Ա. Ավետիսյանին, ուսումնամեթոդական վարչության պետ, պրոֆ. Ա. Ս. Տեր-Մարկոսյանին և ուսումնակազմակերպական բաժնի պետ Ռ. Ա. Արիստակեսյանին 2017-18 ուստարվանից ընդհանուր բժշկության, ռազմաբժշկական և ստոմատոլոգիական ֆակուլտետների չորրորդ և բարձր կուրսերում հիմնական մասնագիտական առարկաներից կազմակերպել միջառարկայական պրոբլեմային դասախոսություններ և դրանք ընդգրկել դասացուցակներում:
4. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆ. Ս.Ա. Ավետիսյանին, ընդհանուր բժշկության ֆակուլտետի դեկան, դոց. Ն. Բ. Շահվերդյանին և ռազմաբժշկական ֆակուլտետի պետ, պրոֆ. Ս. Գ. Գալստյանին.
- 4.1 2015-16 ուստարվա մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորման առաջին՝ գործնական ունակությունների փուլն ատեստավորել քննական գնահատականով,
- 4.2 2016-17 ուստարվանից բոլոր հիմնական մասնագիտական առարկաների վերջնական գնահատականի ձևավորման մեջ ներառել գործնական ունակությունների քննական ատեստավորման բաղադրյալը:
5. Հանձնարարել ֆինանսատնտեսական գծով պրոռեկտոր Կ. Ա. Հարությունյանին.
- 5.1 մինչև 2016թ. ապրիլ ամիսն ավարտել և ներդնել նոր համակարգչային համալիր ծրագիրը,
- 5.2 մինչև 2016թ. մայիս ամիսն ավարտել «Էլեկտրոնային համալսարանի» պլանավորված բաղադրիչների ստեղծման աշխատանքները:
6. Հաստատել «Բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կազմակերպման և անցկացման կարգում» և «Ուսումնամեթոդական վարչության կանոնակարգում» առաջարկվող փոփոխությունները:
7. Մույն որոշումը քննարկել համալսարանի ստորաբաժանումներում և ընդունել ի գիտություն և ի կատարում:
8. Հետբուհական և շարունակական կրթության ֆակուլտետի էնդոսկոպիկ և էնդոկրին վիրաբուժության ամբիոնի դոցենտ Կ. Հ. Դալլաբյանին, ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնի դոցենտ Վ. Ա. Ասոյանին շնորհել դոցենտի գիտական կոչումներ և ներկայացնել ՀՀ ԲՈՅ-ի հաստատմանը:
9. Որոշման կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր, պրոֆ. Մ. Ջ. Նարինյանին:

Նախագահ՝
Գիտքարտուղար՝

բ.գ.դ.-պրոֆ. Մ. Ջ. Նարինյան
բ.գ.դ.-պրոֆ. Տ. Գ. Ավագյան